Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծննդյան վկայականներում գործող օրենքով պարտադիր չէ սեռի նշումը: Սրա հետևանքով՝ մեր քաղաքացիները բախվում են մի շարք խնդիրների՝ հատկապես օտարերկրյա պետություններում: Բացի դրանից, կարող են լինել նաև այլ խնդիրներ, երբ միայն անունից հնարավոր չէ հասկանալ երեխայի սեռը:

Երեխայի սեռի վերաբերյալ նշում պարունակում են գերմանական[1] և ֆրանսիական[2] ծննդյան վկայականները, այդ նշումը կատարվում է նաև ԱՄՆ շատ նահանգներում, բազմաթիվ այլ երկրներում: Որոշ լեզուներով ծննդյան վկայականում սեռի մասին նշում չկատարելը հիմնականում խնդիր չի հարուցում, քանի որ տվյալ լեզվին համապատասխան փոփոխվում են նաև իգական և արական ազգանունները (օրինակ, ռուս.՝ Соколов և Соколова), երբեմն նաև անունը (օրինակ, ֆրանս.՝ Michel և Michelle/Michèle):

Ուստի առաջարկվում է այս հարցի ամենապարզ լուծումը՝ ծննդյան վկայականներում նախատեսել հատուկ դաշտ և լրացնել համապատասխան տեղեկատվությունը՝ երեխայի սեռի վերաբերյալ:

---

[1] *https://www.gesetze-im-internet.de/pstg/__59.html?fbclid=IwAR1LDY_4dTajlZn75BWiz0xBbPdFkHT24J9RInwk1KS72FtrUPHEqPZMTsM*
1-ին մասի 2-րդ կետ

[2] *https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=6562DDE7929904C8396E6E3B1E160981.tplgfr28s_3?idSectionTA=LEGISCTA000006149970&cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20191119* *57-րդ հոդվածի 1-ին մաս*